



Բաժնեգին տարեկան.— Ֆրանսա եւ Սուրիա 10 Ֆր. Պաղքանեան երկիրներ 50 Սէնթ, արտասահման 60 Սէնթ
Administration et Rédaction, H. N. GHAZAROSSIAN, 7, Rue Papère — MARSEILLE (France)

ԹԻԻ 6

Է. ՏԱՐԻ

ՅՈՒՆԻՍ 1931

ՍՐԲՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔԸ

E. GODET

Յիսուս մեզ մեղքի մէջ փրկելու չեկաւ, հապա մեղքէն փրկելու: Հոգիին առողջութիւնը մեղքերու ներուելուն եւ փրկուածի վիճակին մէջ չէ՝ հապա Սրբութեան վերահաստատման մէջ: Թողութիւն ընդունելն զմեզ Աստուծոյ նմանող չընէ՝ հապա միայն Սրբութիւնը: Մեղքերու ներումը փրկութեան սկիզբն է, որուն վրայէն անցնելով հիւանդը ապաքինութեան մէջ կը մտնէ. բայց բուն առողջութիւնը Սրբութիւնն է:

Եթէ ուրեմն վերցնելիք առաջին դատապարտութիւնը մեղքն է իբր յանցանք, երկրորդը որ պէտք է անհրաժեշտաբար նաեւ վերցուի, մեղքն է իբր զօրութիւն, իբր կամքին մտերիմ առաջնորդը. եւ այս երկրորդը պէտք է կատարուի որպէսզի առաջինը կրկին երեւան չգայ:

Հաւատացեալներուս մէջ մեր կամքին մեղքի մեռնիլը՝ մեղի Յիսուսի մահը իւրացնելն է մեղքին հանդէպ: Խաչին ոտքը, Խաչեալին պաշտանքով նայելով Աստուծոյ եւ մեր միջեւ մտերմութեան այդ արարքով՝ մեր կամքին եւ մեղքին միջեւ բաժանման (ամուսնալուծման) վճիռը կը ծանուցուի պաշտօնապէս եւ իրաւունքով: Եւ այս վայրկեանէն սկսեալ մեր ներքին կեանքին կը մնայ անգամ մը վճռուած այս ամուսնալուծումը գործնականապէս հաստատ պահել...

Մարդ մեղքը իր մանրամասնութեանցը մէջ չի կրնար սպաննել՝ եթէ մէկ անգամէն, ամբողջովին մեղքի սկզբունքներուն մեռած չըլլայ: Այս մահը

տեղի կ'ունենայ կամքին ամբողջութեամբ գործի մըդուելովը՝ ինչ որ խաչեալ Փրկչին վրայ եղած հաւատքի ապացոյցն է:

Բայց մեր մէջ կատարուելիք գործը միայն չաբին կործանումը ու ջնջումը չէ. պէտք է նաեւ հոն բարին վերստին ապրեցնել: Ինքզինքնիս Յիսուսի դէմ առ դէմ դնենք, իր հրաւերն ու հրամանները ընդունելու ներքին պատրաստակամութեամբ՝ ինչպէս Ինքն Յիսուս կ'ապրէր իր Հօրը հետ դէմ առ դէմ: Անձնուրացութեան վճռական քայլով մը մեր մէջէն ամէն խորհուրդ եւ ամէն անձնական կամք պարպենք, որպէսզի կարենանք միանալ Յիսուսի խորհուրդին եւ Յիսուսի կամքին հետ: Այս պատճառաւ Յիսուսի նաչինք եւ Անոր միտքն ու գործելակերպերը սերտենք, եւ ինդրենք Իրմէն որ իր այս յատկութիւնը մեր մէջ փոխանցէ, որպէսզի մենք կարենանք գործել եւ իօսիլ՝ ինչպէս Ինքը պիտի ընէր նոյն պարագաներուն տակ՝ եթէ մեր տեղը Ինքն ըլլար:

Այս մտահայեցումով էր որ նա իր Հօրը կը նաչէր եւ Հօրմէն կ'ապրէր. ամէն վայրկեան «Իր Հօրը Իրեն ցուցուցածը» ընելով եւ «Իր Հօրը Իրեն ցուցուցածը» յայտնելով:

Հոս ամէն բանէ առաջ բռնելիք դիրք մը կայ. «Ես Քու մէջդ եւ Դուն Իմ մէջս»: Ասիկա հաւատքի գործն է. եղական, վճռական, երբեմն նոյնիսկ վայրկեանական՝ ինչպէս մարդկային կեանքի ամենամեծ

ցնցումները: Յետոյ, անկէ ետք պէտք է այս դիրքը պահել, հաստատել եւ գործնականապէս յաւերժացնել ոչ առանց պայքարի, ոչ առանց չարչարանքի . . . : Ասիկա ընել Սրբութեան անխոնջ եւ յաւատեւ գործն է. այսինքն մարդկային հաւատարմութեան Աստուածային հաւատարմութեան հետ շփման զաւուճեալ ամէն վայրկեան Անոր մէջ լուծուելու գործը:

Սուրբ հանդիպում, փառաւոր միութիւն, սրբաբան մը, գոր Յիսուս այս աշխարհի վրայ հիմնեց եւ որուն մէջ մեզ ամէնա կը հրաւիրէ մտնել այլեւս երբեք անկէ չելլելու համար:

ՍՐՏԻՆ ԿԱՐԾՐԱՑՈՒՄԸ

«Երբ կը ցանէր, մէկ քանիները
ճամբուն քով ինկան»

Սերմը ճամբու մը մէջ չի կրնար բուսնիլ: Եւ այո, մարդուս սիրտը կրնայ բանուկ ճամբայի մը չափ կարծր դառնալ: Մանկան մը սիրտը զգայուն է ամէն տպաւորութեանց: Բայց քանի կը մեծնայ մանուկը՝ այն ազդեցութիւնները, զգացումները, յուզումներն ու երեւակայութիւնները, որոնք շարունակաբար անոր սրտին վրայէն կ'անցնին՝ զայն կը կարծրացնեն ոտքերու կոխան եղած ճամբու մը պէս: Ամէն անգամ որ երիտասարդ մը կը համոզուի թէ մեղք գործեց՝ բայց իր մեղքէն չբաժնուիր՝ անոր սիրտը իր կակղութենէն մաս մը կը կորսնցնէ: Ամէն անգամին որ նա կ'զգայ թէ այս կամ այն բանը ընելը շիտակ է՝ եւ զայն անմիջապէս չընել, հապայետաձգելով թոյլ կուտայ որ բարիին ձայնը տեղաբանայ՝ անիկա ապագային կրելիք բարի տպաւորութիւններուն նուազ զգայուն կը դառնայ:

Կեանքի սովորական փորձառութեանց մէջ ալ նոյն արդիւնքը կը տեսնենք: Գործերու կառքին ծանր անիւները սրտին վրայէն կ'անցնին՝ եւ հոն անիւներու խորունկ եւ կարծր հետքեր կը շինեն: Մեր սրտերը պէտք էին աւելի լաւ պատնէշաւորուած ըլլալ: Պէտք չէր թոյլ տայինք այս ծանր կառքերուն անոնց վրայէն անցնիլ: Մարդ պէտք է իր բոլոր զբաղմունքներուն մէջ ալ իր սիրտը կակուղ և տաք պահէ: Կակուղ մանկան մը սրտին նման, եւ անորին պէս խոնարհ, դիւրազգաց, սիրող, վստահող: Իր ներքին կեանքը պէտք է սրբաբան մը ըլլայ՝ արդիւնաւոր ամէն պիղծ այցելուներու, եւ բաց միայն Աստուածային հիւրերու առջեւ: Դժբաղդաբար մարդոց մեծ մասը իրենց սրտերը հասարակաց ճամբայ մը կ'ընեն, այնքան կոխոտուած եւ այնքան բեռնաւորուած այս աշխարհին բաներով՝ որ անիկա այլեւս ուրիշ ամէն տպաւորութեան անզգայ կը մնայ:

Իր սիրտը կարծրացնելու ուրիշ կերպ մըն է՝ զայն մեղաւոր բնաւորութիւններով կոխկոտել տալ:

Հին աւանդութիւն մը կ'ըսէ թէ՝ ուրուական մը ձիու մը վրայ հեծած կէս զիշերին երեւին դաշտերու մէջ կ'արշաւէր, եւ իր ձիուն ամէն կոխած հողը անբերրի կը դառնար, հոն այլեւս ոչ մէկ բան կը բուսնէր: Նոյն բանը կը պատահի այն սրտին՝ որ ցանկութեան, հեշտասիրութեան, ազահութեան, եսամոլութեան, կիրքի վայրենի քայլերէն կոխոտուած է: Շատ մը անձեր այն կարծիքը ունին թէ երիտասարդներուն համար՝ քիչ մը ժամանակ ինքզինքնին մեղքի հոսանքին տալը՝ փաստ մը չունի, պայմանաւ որ՝ ետքը կարենան ինքզինքնին շիտակել: Սատանան երբեք մարդոց ախանջներուն ասկից աւելի կործանարար սուտ մը չէ փսփսած: Այն սիրտը որ ցածոգի ցանկութիւններու եւ ունէ տեսակ մեղքերու իր վրայէն կոխկոտելը թոյլ տուած է՝ երբեք չի կրնար առաջուան եղածին նման կակուղ եւ բարեբեր հող մը դառնալ:

DR. MILLER

ՎՏԱՆԳԱՒՈՐ ԹՌՉՈՒՆՆԵՐԸ

Ու երբ կը ցանէր, մէկ քանիները ճամբուն քով ինկան, եւ թռչունները եկան ու կերան վանոնք:

Մատթ. ԺԳ. 4

Աւանդութիւնը կը պատմէ թէ անգամ մը մարդ մը եւ իր կինը եկեղեցի կ'երթային: Անոնք իրենց ետեւէն քայլերու ձայնիւ լսելով դարձան, տեսան թէ եկողը պօգալի տեսքով մարդ մըն էր, թոչնոց վանդակ մը իր ձեռքը, որուն մէջ լեցուն էին սև թռչուններ: Փորձիչն էր ան:

— Ո՛ւր կ'երթաս, հարցուցին սարսափահար ամուսնիքը:

— Եկեղեցի:

— Եկեղեցիին մէջ ի՞նչ գործ ունիս:

— Զեզմէ աւելի կարեւոր գործեր:

— Ի՞նչ:

— Ատոնք իմ գործի գաղտնիքներս են, բայց որովհետեւ դուք այսօր լաւ տրամադրուած էք, յայտնեմ ձեզի: — Այս օրուան գործս է այս թռչունները արձակել, որպէսզի անոնք Աստուծոյ սերմանուած հոսքը յափշտակեն: Նպատակս է եկեղեցի գացողներուն խորհուրդները խանգարել եւ անոնց ուշադրութիւնը քարոզէն վրիպեցնել: տեսէք թէ ինչպէս կ'ընեմ զայս: Հոն վաճառական մը կայ: Անմիջապէս իրեն թռչուն մը կը դրկեմ, ասոր վրայ մարդը անմիջապէս կ'սկսի դիտել միւս վաճառականը, որ իրմէ առաջ նստարանի մը վրայ նստած է: «Վա՛յ», կ'ըսէ ինքն իրեն. «Ասիկա՞ ալ եկեղեցի եկած է: Դուրսը ինչպէ՞ս կը խաբէ իր յաճախորդները, իսկ եկեղեցիին մէջ ալ կ'ուզէ աստուածապաշտ ցոյց տալ ինքզինքը»:

Տեսէք, հոն երկու ուշադիր աղջիկներ. անոնց երկու թռչուններ կը զրկեմ: Անմիջապէս կ'սկսին դարդարուած ծանօթ աղջկան մը նայիլ եւ կ'սկսին իրարու հետ փոփախլ, «Տես հեղ մը սա արդիական ղլխարկը, տա արդիական հանդերձները, այդ աղջիկը երթալով աւելի աչքի զարնող հանդերձներ կը հագուի, նոյնիսկ եկեղեցիին մէջ: Իր ունեցած այդ քիչ մը դրամը կրնայ աւելի լաւ բաներու գործածել:

Հոն ծերունի հիւանդոտ կիին մը կը նստի, թռչնիկ կ'երթայ եւ անոր կը յիշեցնէ, «Որքա՛ն հովի հոսանք կայ եկեղեցիին մէջ»: Անմիջապէս ամէն ուշադրութիւն կը փարատի իր մէջէն: Այլ քարոզէն բառ մ'իսկ չը լսեր: Վախով այս կամ այն կողմ կը քաշուի նստարանին վրայ. նոյնիսկ տեղը կը փոխէ, եկեղեցիին պատուհանները կը դիտէ եւ անհամբեր կ'սպասէ քարոզին վերջանալուն, որպէսզի դեռ չհիւանդացած տուն կրնայ հասնիլ:

Տեսէք, ասոնք ամէնն ալ իմ թռչնիկներուս միջոցաւ այն կէտին բերի որ այլեւս Աստուծոյ խօսքը մտիկ ընելու համար աւանջ եւ տրամադրութիւն չունենան:

* * *

Ա՛խ, քանի՛ հազար անգամներ այդ բանը կը կրկնուի պատմութեան մէջ եւ նոյնիսկ այսօր: Ի՞նչ կը խորհիս, սիրելի ընթերցող, երբոր Աստուծոյ տունը երթաս, աւելի հաւատարմաբար քու սրտիդ մէջ առնել չե՞ս ուզեր այն խօսքը որ Սողոմոնի իմաստութիւններուն մէջ զրուած է:—

Երբ Աստուծոյ տունը կ'երթաս ոտքիդ զգուշութիւն ըրէ եւ աւելի մտիկ ընելու մօտեցիր:

Թրգմ. ԳԵՐՄԱՆԵՐԷՆԷ

ՕՐՀՆԵԱԼ ԿԵԱՆՔԻՆ ՆԵՐԿԱՆ

Dr. F. B. Meyer

« Կ Ը Ս Ի Ր Է »

ՅԱՅՏԹ. Ա. 5

Նոր թարգմանութիւնը որպիսի՛ ճոխ եւ խոր իմաստ մը կուտայ այս փառաբանութեան, զոր Յովհաննէս առաքեալ փոխ կ'առնէ երկինքի երաժշտութենէն անով բանալու համար Յայտնութեան գիրքը: Մենք սովորած ենք կարդալու, «Անով որ մեզ սիրեց» բայց հիմա կը տեսնենք որ անցեալէն ներկայի թարգմանուած է. «Անոր որ մեզ կը սիրէ»: Յիսուսի իրեններուն վրայ ունեցած սէրը մշտնջենական ցօրեկ մըն է, յաւիտենական ներկայ մը, լեցունութեան ովկէան մը առանց տեղատուութեան կամ դառնալու շուքի:

Անտարակոյս Ան մեզ սիրեց ու Իր սրտին վրայ

կրեց աշխարհները ստեղծուելէն առաջ: Մեզ սիրելուն համար էր որ Նա Իր անձը ունայնացուց եւ հնազանդ եղաւ խաչին մահուանը: Այո՛, եւ մեզ պիտի սիրէ այն գուրգուրանքովը որ փեսան հարսին հանդէպ ունի, մեր Իրեն հետ անցընելիք բոլոր ոսկեղէն տարիներու ընթացքին, որոնք կ'սկսին «Հարսանեաց ընթրիքին» եւ երբեք չպիտի վերջանան . . . : Բայց հոս է այն անգին խորհուրդը թէ Նա հիմա կը սիրէ զմեզ: Եթէ Նա զիս սիրեց երբ Ինքզինքը ինծի համար տուաւ, որոշ է թէ այսօր ալ զիս հաւասարապէս կը սիրէ որովհետեւ Ան միեւնոյնն է ներկային՝ այսօրուան, անցեալին՝ երեկին ինչպէս որ նոյնը պիտի ըլլայ ապագային՝ յաւիտենականին մէջ:

Մենք այնքա՛ն հակամէտ ենք Քրիստոսի սէրը մեր գնահատած եւ վայելած չափովը դատելու: Դիւրին է Անոր հաւատալ երբ մենք հոգեւին եռանդուն եւ առողջ կ'զգանք, երբ մթնոլորտը մաքուր է եւ օդը պայծառ. կամ երբ կ'ապրինք երջանիկ հնազանդութեան եւ գիտակից յարաբերութեան մէջ: Մեծ ճիգի պէտք չկայ այսպիսի պարագաներու տակ վարանելու Յիսուսի սիրոյն: Բայց երբ մեր երկինքը մթազնած է, ու մեր ճամբան փշոտ ու անանցանելի ցախաստանէ մը կ'անցնի, երբ մեզ նեղողները կը բազմանան եւ դժբաղդութիւնները մէկմէկու կը յաշորդեն, երբ կը գիտակցինք ձախողանքի եւ մեղքի, այն ատեն մեզի բնական չի զար վստահիլ Քրիստոսի անփոփոխ սիրոյն: Սակայն աւելի դիւրին է ենթադրել որ արեւուն տուած տաքութիւնը փոփոխական է համեմատաբար երկրի հիւսիսային քմայքոտ կլիմային շերմութեան աստիճանին, քան խորհիլ որ Յիսուսի այդ սէրը կրնայ փոխուիլ մեր զգացումներուն ելեւէջներուն համեմատ: Անոր սէրը անշարժ կշիռք մը ունի որ չզործեք մեր մեղքերու ծանրութեան համաձայն: Այս սէրը չնուազիր մեր պաղութիւնովն կամ զանցառութեամբը: Մշտահոս ալ մը, զոր սառնամանիքը չկրնար կաշկանդել, որ չնուազիր ամառուան չորութենէն, եւ զոր սերունդներու պահանջները չեն կրնար սպառել:

Անպատիւ աւագին վրայ մահամերձ փոռած փախստական Եղիան, կամ հաւատքէն ինկածը որ իր հետեւած ճամբուն դառն արդիւնքները կը հնձէ, վհատ աքսորականը որ Հերմոններէն կ'ողբայ երջանիկ անցեալը (Տես Սաղ. ԽԲ), ասոնք բոլորն ալ կրնան վեր յառիլ Քրիստոսի սիրոյն հոգաւոր երկինքին եւ կրնան վստահ ըլլալ որ Ան կը սիրէ յաւատեւ եւ անյողզող սիրով մը: Ընթերցող, զրէ՛քու սրտիդ տախտակներուն վրայ թէ ո՛չ մեղք, ո՛չ վիշտ, ո՛չ խորութիւն կամ բարձրութիւն, ո՛չ ներկայ բաները եւ ո՛չ գալու բաները կրնան փոխել Քրիստոսի քեզի հանդէպ ունեցած սիրոյն լեցունութիւնն ու տեւողութիւնը: Եթէ միայն քրիստոնեաներ իրապէս ըմբռնէին այս մեծ ճշմարտութիւնը,

անոնք յաճախ հակառակ իրենց զգացումներուն, պիտի համարձակէին հաւատալ ու հաստատել Աստուծոյ անփոփոխ սէրը: Այսպէսով պիտի համէին ամուր գետնի մը, ուրկէ հոգիներու մեծ հակառակորդը չը պիտի կրնար խախտել գիրենք:

«Առանձին եւ ընկճուած կ'զգամ,

բայց Աստուած կը սիրէ զիս»:

«Երբ մէջ խարխափելով կ'երթամ,

բայց Աստուած կը սիրէ զիս»:

«Ինկած եմ, ուրիշներէ լաւ չեմ,

բայց Աստուած կը սիրէ զիս»:

«Պատիժ-խրատի շրջանէ մը անցնելու վրայ եմ,

բայց զայս լաւագոյն կը հաստատէ Թէ

չայրը կը սիրէ զիս»:

Այս է յաղթութեան եւ հանգստեան գաղտնիքը:

Մեր Տէրը հրամայեց Դր սիրոյն մէջ հաստատ կենալ: «Եթէ իմ պատուէրներս պահէք, իմ սիրոյն մէջ պիտի կենաք, ինչպէս ես իմ Հօրս պատուէրները պահեցի եւ Անոր սիրոյն մէջ կեցեր եմ» Յովհ. ԺԵ. 10: Անտարակոյս այս կը նշանակէ Իր սիրոյն գիտակցութեան մէջ: Մէկ բան է լոյսի մէջ ըլլալ, եւ տարբեր բան մ'է գիտնալ զայս: Առումով մը մենք բոլորս ալ Քրիստոսի սիրոյն ցոլքերուն մէջ կ'ապրինք, բայց բոլորս ալ չենք վայելեր զայս իբր կենդանի եւ գործնական փորձառութիւն մը: «Անձերնիդ Աստուծոյ սիրոյն մէջ պահեցէք», այսինքն Աստուծոյ ձեր վրայ ունեցած սիրոյն շարունակական գիտակցութիւնը մշակեցէք:

Եօթը ոսկեղէն կանոններ կան այս գիտակցութիւնը ձեռք բերելու եւ պահպանելու համար:

Ա) Առաւօտուն բնաւ սենեակդ մի թողուր առանց դրապէս ըմբռնելու թէ, «Ինք չայրը կը սիրէ քեզ»:

Բ) Խնդրէ Սբ. Հոգիէն — որ Աստուծոյ սէրը կը տարածէ մեր սրտերուն մէջ եւ որ ամէն բան կը յիշեցնէ մեզի — որ կարողանաս լսել Անոր մեղմ ու բարակ ձայնին մրմունջները որք քեզի կը յիշեցնեն թէ «Աստուած կը սիրէ քեզ»:

Գ) Ամէն հաճելի խօսք, քաղցրաբարոյ գործեր, լուսոյ նշոյլ մը, թոչնոց դալալիկն ու ծաղկանց բուրումը, այս բոլոր սխրալի բաները ընդունէ իբր Իր սիրոյն նշանակները եւ վեր նայէ ժպտագին մինչ կը մնջես Իրեն, «Գոհանամ զՔէն»:

Դ) Խուսափէ՛ այն ամէնէն որ չյարմարի՞ք քու Աստուծոյ մէկ սիրեցեալ գաւազը ըլլալու իրողութեանը հետ: Դիւրագրգռութիւն եւ դաժանութիւն, սրտմտութիւն ու բարկութիւն: Զգո՛յշ չար լեզու գործածելէ եւ սիրոյ մէջ թերանալէ:

Ե) Յօժար եղի՛ր էն նուաստ եւ աննշան բաներն ընելու Աստուծոյ սիրոյն համար, իբր մէկը որ «ստիպուած է» այդ սէրէն ո՛չ թէ եսին այլ Անոր համար ապրելու: Թող քու նշանաբանդ ըլլայ ամէն բան ընել իբրեւ Աստուծոյ սիրուած անհատ մը:

Զ) Ո՛չ մէկ պատուիրանք որուն կը գիտակցիս, աննկատ մի թողուր Սբ. Գրոց էջերուն վրայ: Հնազանդէ: «Ան որ Իմ պատուէրներս կը բռնէ ու կը պահէ զանոնք, անիկա է Զիս սիրողը, եւ ան որ Զիս կը սիրէ Իմ Հօրմէս պիտի սիրուի, ու ես զանիկա պիտի սիրեմ եւ Ինքզինքս անոր պիտի յայտնեմ»:

Է) Ամենուն հանգէպ անշահախնդիր սէր մը եւ բարեացակամութիւն մշակէ. «Ան որ սիրոյ մէջ կը բռնակի, Աստուծոյ մէջ կը բռնակի, Աստուած ալ անոր մէջ»: Երբ այլոց հանգէպ մեր ունեցած սիրոյն մէջ արմատացած եւ հաստատուած ենք, լաւագոյնը կըրնանք հասկնալ Աստուծոյ մեր վրայ ունեցած սէրը:

Մեր Փրկչին կեանքին հմայքը այն էր որ Նա կարող էր ըսելու, «չայրը կը սիրէ Որդին»:

Իր մահուան երեկոյին լաւագոյն բանը որ Նա մեզի կրնար մաղթել այս էր որ մենք ալ վայելէինք այն սէրը՝ որով չայրը գիւրքը սիրած էր:

Թուլութեամբ եւ զանցառութեամբ չվրիպեցնենք մեր ժառանգութիւնը: Այլ Անոր նման ապրինք հրմայքին տակ՝ այն քաղցրալուր եւ որտառուչ նուագին, որ կ'աւետէ

«ԿԸ ՍԻՐԷ ՄԵԶ»

ԻՆՉՈ՞Ւ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Իսկ արդ դատապարտութիւն չկայ Քրիստոս Յիսուսով եղողներուն: Հռով. Ը. 1

Հոռոմայեցոց ութերորդ գլուխը ամբողջ Ս. Գրոց մէջ ամենազանազան գլուխներէն մին է: Աստուծոյ գաւազը այդ գլխուն վրայ կենալով իբր հաստատ վէճ՝ ուրախ կը բացագանչէ, «Իսկ արդ դատապարտութիւն չկայ Քրիստոս Յիսուսով եղողներուն»: Այս փառապանծ գլուխը մեր մտքերուն առջեւ կը բերէ այն պատճառները, թէ ինչո՞ւ դատապարտութիւն չկայ Քրիստոս Յիսուսով եղողներուն:

1. Աստուծոյ գաւազին համար դատապարտութիւն չկայ, որովհետեւ անիկա Յիսուս Քրիստոսի «մէջ» է: Ո՛չ մի բան կայ դատապարտելի Քրիստոսի մէջ: Նա սուրբ է եւ առանց մեղքի: Նա մեղք չգիտցաւ: Հետեւաբար, երբոր ապահովաբար պատապարտինք «Քրիստոսի մէջ» եւ մասնակից ըլլանք Աստուծոյ, յիշենք ընտելեան՝ չպիտի զանուի մեղք մը Քրիստոսի մէջ որով համար դատապարտուինք:

2. Քրիստոս Յիսուսով եղողներուն դատապարտութիւն չկայ, որովհետեւ «կենաց Հոգին», Սբ. Հոգին եկած է մեր սրտերուն մէջ եւ մեզ «ազատեց մեղաց... օրէնքէն»: Վերստին ծնունդով Սբ. Հոգին մեզի ներքին նոր բնութիւն մը տուած է՝ որ կամքով «չկրնար մեղանչել» քանզի Աստուծոյ ծնած ենք, եւ Անոր սերմը մեր մէջ կը մնայ. Ա. Յովհ. Գ. 9: Դատապարտութիւնը կուգայ միայն մեղքի համար, սա-

կայն «Կենաց Հոգին» մեզ ազատեց մեղքէն (հ. 2):

3. Աստուծոյ զաւկին համար դատապարտութիւն չկայ, քանզի անոր մեղքերը արդէն «դատապարտուած» են: «Աստուած իր Որդին զրկեց մեղանշական մարմնի նմանութեամբ» որ «դատապարտեց» մեղքը մարմինին մէջ: Մեր մեղքերը արդէն դատապարտուած են Քրիստոսով: Նա վիրաւորուեցաւ, չարչարուեցաւ, անէծք եղաւ, «Անիկա մեր մեղքերուն համար վիրաւորուեցաւ, եւ մեր անօրէնութիւններուն համար ծեծուեցաւ»: Դատապարտութիւնը անցած է, փա՛ռք Աստուծոյ (հ. 3):

4. Քրիստոս Յիսուսով եղողներուն դատապարտութիւն չկայ, որովհետեւ «մարմինը մեռած է մեղքին»: Մեր հին մարմնաւոր, մեղաւոր բնութիւնը՝ Աստուծոյ մեռեալ համարուած է, քանզի մենք Քրիստոսով խաչուեցանք խաչին վրայ: «Աս գիտնանք որ մեր հին մարդը Անոր հետ խաչուեցաւ, որ՝ մեղաց մարմինը փճանայ, որ ասկէ ետեւ մեղքի չծառայենք» Հոով. 2. 6: «Քանզի ան որ մեղքին մեռած է՝ մեղքէն արդարացած է» Հոով. 2. 7:

5. Քրիստոս Յիսուսով եղողին դատապարտութիւն չկայ, քանզի անիկա «Աստուծոյ որդի է»: «Ի՞նչ որ որդիք, ուրեմն ժառանգներ, Աստուծոյ ժառանգներ ու Քրիստոսի ժառանգակիցներ»: Ամբողջ երկինքը մերն է: Եւ մենք բնաւ երբեք չենք կորսնցներ մեր երկնային ժառանգութիւնը (հ. 14):

6. Քրիստոս Յիսուսով եղողին դատապարտութիւն չկայ, քանզի Աստուծոյ Հոգին անոր համար կ'աղօթէ եւ կը բարեխօսէ անբարբառ հառաչանքներով (համար 26):

7. Քրիստոս Յիսուսով եղողին դատապարտութիւն չկայ, քանզի «ամէն բաները» անոր համար «բարիի գործակից» կ'ըլլան: Ոչ մի բան գործակից կ'ըլլայ մեր դատապարտութեան (հ. 28):

8. Քրիստոս Յիսուսով եղողին դատապարտութիւն չկայ, քանզի Աստուած զանիկա սահմանեց «Իր Որդւոյն պատկերին կերպարանակից ըլլալու»: Անտաքակոյս պիտի հասնինք այն փառաւոր պատկերին, քանզի բոլոր շնորհաց Աստուածը որ մեզ առաջուց սահմանեց, կանչեց եւ արդարացուց՝ նաեւ պիտի փառաւորէ մեզ (հ. 29):

9. Քրիստոս Յիսուսով եղողին դատապարտութիւն չկայ, որովհետեւ «Աստուած իր կողմն է, ո՛վ պիտի ըլլայ իրեն հակառակ»: Ո՞վ է որ մեզի «մեղադիր ըլլայ» կ'ըսէ Պօղոս, Աստուած անանկ պիտի ընէ: Աստուած, որ մեզ արդարացուց եւ լուաց ձիւնի պէս: Ոչ յիշաւ: «Ո՞վ է որ կը դատապարտէ» կը գոչէ նա երկրորդ անգամ: Քրիստոսն է: Քրիստոս պիտի դատապարտէ մեզ: Ան որ մեռաւ մեզի համար, եւ Ան որ հիմա իսկ կը բարեխօսէ մեր մեղքերուն համար Աստուծոյ առջեւ: Ոչ, բնաւ: (հ. 31):

10. Եւ վերջապէս, Քրիստոս Յիսուսով եղողներուն

դատապարտութիւն չկայ, քանզի տիեզերքի մէջ ոչ մի բան կրնայ զատել մեզ Քրիստոսի սէրէն: «Ո՛չ մահը, ո՛չ կեանքը, ո՛չ հրեշտակներ, ո՛չ իշխանութիւններ, ո՛չ զօրութիւններ, ո՛չ ներկայ բաներ, ո՛չ գալու բաներ, ո՛չ բարձրութիւն, ո՛չ խորութիւն, ոչ ալ ուրիշ արարած մը կրնայ մեզ զատել Աստուծոյ սէրէն որ Քրիստոս Յիսուս մեր Տէրն է»: Ոչ, «Աս ամէն բաներուն մէջ՝ ալ աւելի յաղթող կ'ըլլանք Անով՝ որ մեզ սիրեց» (հ. 35): «Իսկ արդ դատապարտութիւն չկայ Քրիստոս Յիսուսով եղողներուն»:

Վեր. ՆԻԳՕԼԱ ՓԱՓԱԶ

ՊՐԱՆՔՍ, Ն. Ե.

ՊՕԴՈՍ ԱՌԱՔԵԱԼ

Ինչո՞ւ կը հալածէր քրիստոնեաները.— Հաղիւ իր ուսման շրջանը աւարտած եւ ուսման կայաններէն սկսած՝ Պօղոս ինքզինքը գտաւ դէմ առ դէմ նորահաստատ եկեղեցւոյն, քիչ ետք դարձաւ անոր ոխերիմ հակառակորդներէն մին եւ իր ամբողջ կարողութիւնն ու կորովը տրամադրեց քրիստոնէութիւնը բնաջնջելու գործին: Ղուկաս մեզի շատ պարզ ու որոշ կերպով նկարագրած է անոր թշնամութեան աստիճանական զարգացումը: Ստեփանոսի քարկոծման ատեն, երբ ինքը առաջին անգամ ըլլալով կը յիշուի, տակաւին միայն կրաւորական դեր մը ունէր, միայն «կամակից էր անոր սպաննուելուն» Գործ. Է. 59, սակայն քիչ ետք արդէն գործօն մասնակցութիւն ունէր հալածանքին մէջ, եւ «Եկեղեցիին շատ փնաս կուտար, տուններ կը մանէր, այրեր եւ կիներ կը քաշէր՝ բանտ դնել կուտար» Գործ. Ը. 3: Շատ չանցած անոր հակառակութիւնը արդէն իր ծայրագոյն աստիճանին հասած էր, այնպէս որ Գործոց Թ. Իին մէջ կը կարդանք, «Տէրոջը աշակերտներուն դէմ ըսպանալիք ու մահ կը փչէր»: Ան կ'արհամարհէր, կ'ատէր եւ ջնջել կ'ուզէր զանոնք: Ո՞վ գիտէ, քանի՞ քրիստոնեայ ընտանիքներ քայքայեց, քանի՞ մանուկներ որբացուց եւ քանի՞ մայրերու աչքերէն դառն արտասուք հոսեցուց: Ուշիմ ընթերցողը կրնայ երեւակայել թէ որքա՛ն մեծ դժբաղդութիւններ ծածկուած են Անանիայի հետեւեալ խօսքին մէջ.— «Տէր, շատերէ լսեցի ան մարդուն համար թէ որչա՛փ չարիքներ ըրաւ քու սուրբերուդ Երուսաղէմի մէջ»:

Եւ Պօղոս այս ամէնը կ'ընէր առանց խղճահարկութեան: Քրիստոնէութեան դառնալէն տարիներ ետքն իսկ ան կարող էր ըսել, «Ես բոլորովին բարի խղճմտանքով կեանք վարեի եմ» Գործ. ԻԳ. 1:

Ինչ էր ասոր գաղտնիքը: Ինչպէ՞ս կրնար այդքան կուրնալ այս բարեպաշտ Իսրայէլացին, որուն ամբողջ ձգտումն եղած էր ճանչնալ Աստուծոյ կամքը ու հնազանդիլ Անոր եւ որ Մեսիայի գալուն ըս-

նար քանդել նազովրեցիին գործը, բայց միևնոյն ատեն կը խորհէր ալ թէ Անիկա իր այս կամքը պիտի կատարէր միայն մարդոց միջոցաւ: Ուստի իրեն նման ուրիշի մը համար սխալ էր՝ օրինազանցները պատժելու պարտականութիւնը իր ուսերուն վրայէն մէկդի նետել եւ թոյլ ու անհոգ կերպով դիտել օրէնքին անարգութիւնը:

Ահա ասոնք էին շարժառիթները, որոնցմէ զրդեալ Պօղոս կը հալածէր քրիստոնեաները: Այնքան կուրցեր էր որ երբեք չէր տեսներ Քրիստոսի փառքը, չէր հասկնար քրիստոնէից հաւատքը, չէր սիրեր զանոնք իբր ընկերները եւ զազափար չունէր խղճի ազատութեան նկատմամբ, Հպարտութեամբ կ'արհամարհէր խաչեալին հետեորդները: Չէր փորձէր՝ զանոնք խրատով ու մեղմ պատիժներով դարձեալ հրէութեան գոգը բերել, քանզի կը խորհէր թէ այդ մասին ամէն ջանք ի գուր էր: Անոնք այնքան ջերմօրէն կը հաւատային նազովրեցւոյն յարութեան եւ այնքան մոլեռանդութեամբ կը հետեւէին Անոր որ անկարելի էր զանոնք զգաստութեան բերել: Ուստի զանոնք շնչելն էր միակ էլքը: Ան կ'ատէր նոյնիսկ Յիսուսը, օրէնքը քանդողը եւ Աստուծոյ դէմ ժպրհողը, որ մինչ մէկ կողմէն չէր յաջողած Մեսիայի փառաւոր թագաւորութիւնը հաստատել, իսկ միւս կողմէն յանգգնած էր Ինքզինքը «Կենդանի Աստուծոյ Որդին» հռչակել:

Այս էր իր հոգեկան տրամադրութիւնը, երբ եկաւ փոփոխութիւնը, դարձք: Այդ մասին յաջորդիւ:

(Շար.)

Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ՍԵՆՆԱԿԻՍ ՄԷՋ

Ով աշխարհի միակ Փրկիչ անմահ,
Ով Աստուծոյ սիրող սրտի վեհ Թարգման,
Մեծ մեղքերու ծանր բռնա տակ ընկճած
Քրդի կուգամ սեղանակիս մէջ խոնարհած:

Շատ ժամանակ յիմարաբար վատնեցի,
Թափառական առդին անդին դիմեցի,
Մերթ Նիչչէին, մերթ Լեւինին նայելով
Կիրքերս դարձան զերթ ալիքով կատաղած ծով:

Ո՛չ Նիչչէնեք, ո՛չ Լեւիններ ալաղան
Կրցան տալ ինձ մէկ բանաւոր պատասխան,
Ո՛չ ոյժ կամքի, եւ ո՛չ նշույլ մ'իսկ յոյսի
Որով կատաղած իմ չար կիրքերս զսպէի:

Անոնք բոլոր մարդիկ են սոսկ անկարող,
Իրենք անձամբ հեծեն մեղքի տակ ճնշող,
Չկայ անձ մը կարող, անբիծ, կենդանի
Որ վրէժ գիս իմ մեղքերէս ստակալի:

Արդ, ով Յիսուս, կարած յոյսը մարդոցմէ,
Քեզ կը դիմեմ ծունկիս վրայ ի սրտէ.

Վերցուր ուսէս սեւ մեղքերու ծանր բռն,
Պարգեւէ ինձ նոր կեանք, նոր սիրտ անվեհեր:

ՐԻՏՐԱՄ

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

ԽԱՅԻՆ ՆԵՐՔԵԼ

Խաչիդ ներքեւ
Կանգնած եմ այսօր
Հոգեղագիւր...
Խիստ մեղսալիր:

Ներէ մեղքերուս, փրկիչ փառաւոր,
Սուրբ կողէդ բղիտղ բոսոր արիւնով.
Սիրտս, հոգիս, էութիւնս բոլոր,
Ոհ, լուս, մաքրէ քու ջինջ արիւնով:

Խաչիդ ներքեւ
Յոգնած, դադարած
Մեղքի բեռով
Բեռնաւորուած:
Քեզ կը հայցեմ
Դաւթի Որդի.

Խաչեալ, սխրալի՛
Բան Աստուածորդի...

ԱԹԷՆՔ

ԺԻՐԱՅՐ ԱՐՄԱՌ

ՍԻՐՈՅ ԵՒ ԲԱՐՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Քօնրատ Կիրակնօրեայ Դպրոցի կարգի մը ամենամեծ տղան էր: Անիկա անգղուսպ էր ու դաժան եւ ամբողջ կարգին սարսափը: Անոր ուսուցիչը ամէն միջոց գործածեց զայն կառավարելու: Անիկա քաղցրութիւն գործածեց եւ նաեւ խստութիւն, սակայն ի գուր: Վերջապէս դպրոցին վարիչին հաւանութեամբ որոշեց զայն դպրոցէն վճռել: Սակայն վճռելէ առաջ ուղեց անիւ նաեւ կարգին հաւանութիւնը: Ամբողջ կարգը անոր վճռման քուէ տուաւ ի բաց առեալ ամենափոքրիկ տղան, որ յաճախ անգթօրէն ծեծ կերած էր անկէ:

«Ինչո՞ւ չես ուղեր որ Քօնրատ վճռուի, Բարլ» հարցուց ուսուցիչը փոքրիկին:

«Որովհետեւ եթէ զայն վճռէք, անիկա պատեհութիւն պիտի չունենայ Յիսուսի վրայով լրսելու եւ փոխանակ լաւանալու աւելի պիտի չարանայ»:

«Ուրեմն կ'ուղե՞ս ներել անոր քեզի հանդէպ ցոյց տուած բոլոր անգթութիւնները» հարցուց ուսուցիչը:

«Այո Պարոն, հայրիկս ու մայրիկս ինձի կը ներեն, Աստուած ալ կը ներէ մեզի բոլորիս յանցանքները, ուրեմն ինչո՞ւ ես չներեմ Քօն-

րատին», պատասխանեց Քարլ:

Փոքրիկին պատասխանը կարգադրեց խնդիրը: Քօնրատ խնդրեց որ դպրոցը մնայ եւ խոստացաւ բարի ըլլալ: Անիկա կատարեց իր խոստումը Տէրոջը վատահելով եւ իր կարգին ամենալաւ տղոցմէն մին եղաւ: Քօնրատ եւ Քարլ եղան նաեւ ամենալաւ բարեկամներ:

Թարգ. ԱՆԳԼԻԵՐԷՆԵ

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Դպրոց՝ համր-խուլերու եւ կոյրերու համար. — Մարտէսէն

շոգեկառքով քանի մը ժամ հեռու գեղեցիկ աւանի մը ընդարձակ մէկ պարտէզին մէջ հաստատուած է սքանչելի խոշոր շէնք մը, լայն սրահներով առողջապահական ամէն պայմաններով, որուն մէջ կը պատկարարուին եւ կը դաստիարակուին 25-30 երկսեռ մանկութեան որոնք զուրկ են խօսելու եւ լսելու կարողութիւններէն: Հաստատութիւնը քանի մը տասնեակ տարիներու փորձուած հաստատութիւն մըն է, ուր դաստիարակուած զաւակները ընդհանրապէս Թնողք ունին, որոնք գիշերօթիկ դպրոցի մը նման կը վճարեն իրենց զաւակներուն համար:

Բանբերի խմբագիրը անգամ մը երկու օրեր անցուցեր է այդ հաստատութեան մէջ եւ տեսած է շատ համբերութիւն պահանջող եւ սակայն սքանչելի արդիւնքներու հասնող այս դպրոցը:

Այս հաստատութիւնը, որ տասնեակ տարիներ առաջ կոյրերու յատուկ դպրոց մըն ալ ունեցած է, կը փափաքի դարձեալ վերաբանալ:

Տնօրէնը կը խնդրէ մեզմէ ծանուցանել Ֆրանսահայերիւ, որ եթէ կոյր զաւակներ ունին, զրկեն իրենց, իրենք պղտիկ վճարումով մը պիտի սորվեցնեն այդ զաւակներուն թէ՛ կոյրերու գրով կարդալ ու գրել եւ թէ ուրիշ նախադրուած արհեստ մը: Վճարելու բոլորովին անկարող եղողներ ընչին վճարումով մը, իսկ ձրի պիտի առնուին միայն որոշ թուով մը:

Հաստատութիւնը կառավարական դպրոց մը է:

Gardi նահանգին ֆրանսացի աւետ. եկեղեցիներու օգնութեամբ շինուած եւ անոնց տարեկան ձեռնարկութեամբ կը շարունակէ իր գոյութիւնը Ֆրանսայի աւետ. եկեղեցիներու համար եւ խուլ ու կոյր զաւակներուն համար:

Հաստատութիւնը մասնաւոր բացառութիւն մը պիտի ընէ հայերուս առանց յարանուանական խտրութեան, այնպէս որ իւրաքանչիւր հայ խուլ համար եւ կոյր մանուկ երկու սեռէն կրնան օգտուիլ այս պատեհութիւնէն:

Հոն զրկուող զաւակներ բոլորովին մաքուր բարոյական շրջանակ մը պիտի գտնեն եւ ամէն տեսակ ֆիզիքական, մեղաւոր, բարոյական եւ հոգեւոր խնամք պիտի ընդունին:

Այս մասին հետաքրքրուողներ թող հաճին գրել կամ խմբագրութեան եւ կամ իրենց գտնուած տեղերուն հոգեւոր պետերուն դիմեն, որպէսզի անոնք կամ մեզի, եւ կամ ուրիշ տեղի տնօրէնութեան գրեն, որուն հասցէն է. —

Institut du Sourds . Muets et Aveugles Protestants de France
St. Hippolyte du Fort
(Gard)

Հոգ. Թերթիկներ եւ Ս. Գրական մասեր ցրուելու գործէն. —

«Օ՛ր, նորէն թերթիկ նորէն թերթիկ ալ ձանձրաձանք այս թերթիկներէն», կ'ըսէր մէկը թերթիկ ցրուողի մը, որ քաղաքավարօրէն իրեն մօտեցած էր հոգեւոր թերթիկ մը ներկայացնելու իրեն:

«Դժոխքին մէջ ա'լ մէկը ձեզի թերթիկներով ձանձրոյթ չպիտի տայ սիրելի պարոնս», ըսաւ երիտասարդ ցրուիչը ձայնով մը:

«Այս թերթիկները կաթոլիկ են պարոնս», կը գոչէ օտարիս կին մը, տատամբակով՝ միեւնոյն ժամանակ վախով ձեռքը երկնցուցած:

«Առէք տիկին եւ կարգացէք, Աստուծոյ յաւիտեանական խօսքերը պիտի գտնէք հոն, որոնք Ձեր ծարաւ հոգին պիտի կշտացնեն: Անոնք կաթոլիկին ալ բողոքականին ալ նոյնքան պէտք են, որքան որ անոնք անմահ հոգի մը ունին:

Սիրելի օտարաւգի եղբայր մը իր երկրին լեռնային գաւառներուն մէջ թերթիկ կը ցրուէր եւ Ս. գրածախուլին կ'ըսէր, իր աւետարանական օթոյին մէջէն Աստուծոյ կենդանի խօսքը աւետարանելէն յետոյ:

Կին մը մօտեցաւ եւ Ս. Գիրք մը ու Նոր Կտակարան մը գնեց: Նա յուզուած էր եւ կ'ուզէր կարդալ այն ճշմարտութիւններու մասին, զորոնք նոր լսած էր եւ որոնք իր սիրտը տակն ու վրայ ըրած էին:

Քանի մը ժամ յետոյ աւետարանիչ բարեկամս գտաւ զինքը փողոցի մը մէջ դեռ կարդալով զբաղած:

«Պարոնս, գոչեց նէ, «Բիշ մը առաջ կը վիճաբանէի ուրիշ կնոջ մը հետ, որ կ'ուզէր հաւատացնել ինձ թէ դուք բողոքական մըն էք. բայց ես իրեն ըսի թէ, Ձեզի պէս աչնի. նկարագիր մը եւ Ձեր քաղցր երեւոյթն ունեցող մէկը չկրնար բողոքական ըլլալ:

Աւետարանիչ բարեկամս ձայն չհանեց, բայց ցոյց տուաւ Աստուծոյ խօսքը, որուն մէջ գտնուած ճշմարտութիւնէն կախում ունէր իր կեանքը, ոչ թէ գիրք ծախողին բողոքական կամ կաթոլիկ ըլլալէն:

Հոգեւոր թերթիկներ ցրուել շատ պատուական եւ աստուածօհաճոյ գործ մըն է: Շնորհաց միջոց մըն է այն: Մէկ վայրկեանի, նոյնիսկ երբեմն կէս վայրկեանի մէջ այդ թերթիկին միջոցաւ կրնանք ըսել, ինչ որ թերեւս կէս ժամէն չպիտի կրնայինք բացատրել. բայց աստի մ'արդ մը իր կարգացածին հանդէպ շատ աւելի անկեղծ կ'ըլլայ քան թէ խօսողի մ'առջեւ:

Այս շնորհաց միջոցը նոյնքան օգտակար է ցրուիչին համար:

Ամէն կ'ուր եղբայր թերթիկ ցրուէ, ամէն կոտորութիւնը կ'անցնի:

Դանդաղ եւ անտարբերութեան մէջ ինկած, սկսէ սպօթել եւ ձեռքդ առ հոգ. թերթիկներ ու ցրուէ ծանօթներու եւ անծանօթներու, որոնց հանդէպ քու ծառայութիւնդ քու մէջը հոգեւոր նոր աշխուժ եւ սէր պիտի դնէ:

Կը տառապի՞ս այլ եւ այլ անմաքուր խորհուրդներով, Տէրոջը վստահէ, առ թերթիկները ձեռքդ եւ մօտեցիր ամէն մարդու այն հաստատ հաւատքով թէ Տէրը այդ թերթիկը պիտի գործածէ անոնց հոգիին փրկութեան համար: Քրիստոս այս հաւատքով արդէն սիրտդ ու միտքդ մաքուր պիտի պահէ:

Le Gérant: Mr. le PASTEUR KALTENBACH

Տպագ. «ԲԱՆԲԵՐ»-ի, Imp. Serres, 81, Rue A. Thiers M^{lle}.